Հավելված 2
Արդարադատության ակադեմիայի
կառավարման խորհրդի 2018 թվականի
դեկտեմբերի 20-ի թիվ ԿԽ-008/18/2 որոշման

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ուսուցման սույն ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) ներառում է դատախազությունում պետական ծառայողների (այսուհետ՝ Ծառայող) 2019թ. վերապատրաստման կրթական չափորոշիչները, ուսուցման ձևը, ուսումնառության ժամաքանակը և ժամկետները, ինչպես նաև դասավանդվող առարկայական կուրսերի համառոտ նկարագիրը:

2. Ծրագիրը մշակվել է Արդարադատության ակադեմիայի կողմից «Արդարադատության ակադեմիայի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի հիման վրա:

3. Ծրագիրը նպատակաուղղված է Ծառայողների մասնագիտական գիտելիքների և հմտությունների շարունակական կատարելագործմանը հետևյալ ոլորտներում. դատախազությունում հանրային ծառայության հիմնահարցեր, բարեվարքություն, գործավարություն, կառավարման հմտություններ:

4. Ծրագիրն իրականացվում է առկա ուսուցման ձևով՝ Ծրագրում նշված խմբերի համար նախատեսված դասընթացների մոդուլների հիման վրա:

5. Ուսումնառության ժամաքանակը դատախազությունում պետական ծառայողների համար՝ 20 ակադեմիական ժամ է:

6. Յուրաքանչյուր խմբի վերապատրաստումն ավարտվում է վերապատրաստման արդյունքների գնահատմամբ: Գնահատումն իրականացվում է տվյալ խմբի դասընթացներին հաջորդող առաջին օրը՝ բանավոր եղանակով, միասնական քննությամբ:

7. Վերապատրաստման ժամանակացույց է սահմանվում 2019 թվականի փետրվար-մարտ ամիսները:

II. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՑԱՆԿ

N	Դասիչ	Անվանում	Ժ/ք
1.	PS-J-012-19	Դատախազությունում հանրային ծառայության հիմնահարցեր և բարեվարքություն	10
2.	PS-G-014-19	Գործավարությունը դատախազության համակարգում	5
3.	PS-G-019-19	Կառավարման հմտություններ	5

III. ԴԱՍԱՎԱՆԴՎՈՂ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐԻ (ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ) ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. PS-J-012-19. Դատախազության համակարգում հանրային ծառայության հիմնահարցեր և բարեվարքություն

Դասընթացն անհրաժեշտ է դատախազությունում հանրային ծառայության և բարեվարքության առանձնահատկությունների վերաբերյալ գիտելիքներ հաղորդելու համար:

Դասընթացը ներառում է՝

- դատախազությունում հանրային ծառայության հիմնահարցեր,
- դատախազությունում հանրային ծառայողի վարքագծի սկզբունքները և դրանցից բխող վարքագծի կանոնները,
- անհամատեղելիության պահանջները,
- այլ սահմանափակումներին և շահերի բաշխմանը վերաբերող հիմնահարցերը:

2. PS-G-014-19. Գործավարությունը դատախազական մարմիններում

Դասընթացն անհրաժեշտ է դատախազությունում գործավարության հիմնադրույթների և ընթացակարգերի վերաբերյալ գիտելիքներ և հմտություններ հաղորդելու համար:

Դասընթացը ներառում է դատախազական մարմիններում գործավարության հիմնական գործառույթները և փաստաթղթաշրջանառության հիմունքները:

3. PS-G-019-19. Կառավարման հմտություններ

Դասընթացն անհրաժեշտ է կառավարման և առաջնորդության վերաբերյալ գիտելիքների ծավալի ընդլայնման և դրանք կենսագործելու կարողությունների ու հմտությունների զարգացման համար:

Դասընթացը ներառում է՝

- կառավարչական հմտություններն ու առաջնորդման ոճերը,
- արդյունավետ պլանավորումը,
- թիմի ձևավորումը և թիմային աշխատանքի կազմակերպումը:

Նախագահող՝ *Ա. Հարությունյան*